ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ

Քրիստոսի փրկագնումը

Երեց Ալեքսանդր Դրաչեվ

Երեց Ալեքսանդր Դրաչեվ

Ես հանդիպել եմ մարդկանց, ովքեր մտածում են, որ «Քրիստոսի դարաշրջանն անցել է և զարգացման նոր շրջան է սկսվել: Եվ այն, ինչ իրականացրել է Քրիստոսը, վարքագծի ճիշտ համաձայնեցված համակարգ է հասարակության մեջ: Նրա կողմից հաստատված բարքերն ու պատվիրանները հրաշալի են, բայց մենք շարունակում ենք առաջ շարժվել»: Եվ հենց այդ պահին ես մտածում եմ Զատիկի մասին, և թե ինչ է իրականում նշանակում Փրկիչի հարությունը:

Մանկությունից սկսած մենք հիշում են այս տոնը. պայծառ գարնանային մի օր՝ Զատիկի թխվածքներով, գունավոր ձվերով, ժպիտներով, նախնիների մասին հիշողություններով և «Հիսուս հարյա՜վ» խոսքերով:

Ես հավատում եմ Քրիստոսի Հարությանը. որ Նա մահացավ և երրորդ օրը հարություն առավ մեռելներից: Նրա Հարության շնորհիվ ես գիտեմ, որ հավերժ կապրեմ իմ ընտանիքի հետ: Հետևյալ օրհներգի մեջ՝ «Օ՜, ինչ երգեր կերգենք», մենք կարդում ենք այս խոսքերը.

Օ՜, ինչ երգեր կերգենք,
Ի՜նչ ողջույններ կլսենք:
Երբ մեր սերը փոխանցենք:
Եվ մեր սիրտը կիրճվի,
Երբ հանդիպենք ու գրկենք
Մեր թանկագին երկնային
ծնողներին:

Երբ ես մտածում եմ նրանց մասին, ովքեր փնտրում են կյանքի իմաստը, ես հիշում եմ Քրիստոսի Քավությունը: Եվ հետո շատ բաներ ընկնում են իրենց ճիշտ տեղերը: Իսկ մոլորությունը, կասկածներն ու հիասթափությունները հեռանում են: Երեց Քրիստոֆերսոնն ասել է. «Եթե Հիսուսն իրականում բառացիորեն հարություն է առել, դրանից անպայման հետևում է, որ Նա աստվածային էակ է: Որևէ կատարյալ մահկանացու իր մեջ չի կրում մահից հետո կյանք վերադառնալու զորությունը»: Աշխարհում շատ տարբեր ուսմունքներ կան: Բայց կա՞ որևէ մեկը, ով հաղթեց մահին, եղավ վարագույրի այն կողմում և վերադարձավ որպես հարություն առած էակ՝ կատարյալ մարմնով ու գիտելիքներով: «Քանի որ Հիսուսը հարություն առավ, Նա պետք է որ Աստված լիներ, դեռ ավելին՝ Հոր Միածին Որդին: Հետևաբար, այն, ինչ Նա ուսուցանում էր, ճշմարիտ է. Աստված չի կարող ստել: Հետևաբար, Նա երկրի Արարիչն է, ինչպես ինքն ասաց: Հետևաբար դրախտն ու դժոխքը իրական են, ինչպես նա ուսուցանեց: Հետևաբար գոյություն ունի հոգիների աշխարհը, ուր Նա այցելեց Իր մահից հետո: Հետևաբար Նա կրկին կգա, ինչպես հրեշտակներն ասացին, և «անձամբ կթագավորի երկրի վրա»: Հետևաբար բոլորի համար գոյություն ունի հարությունը և վերջին դատաստանը:

Հարության մասին գիտելիքը մեզ քաջություն է տալիս դեմ առ դեմ կանգնել մահվանը: Երբ կնոջս հայրը մահացավ, ես վշտացած էի, տեսնելով սիրելի մարդկանց վիշտը, ովքեր չեն հավատում հարությանը: Բայց իմ սիրելիի աչքերի փայլի մեջ ես հավատքի և հույսի լույս տեսա: Նա հանգիստ էր և տխրել էր միայն ժամանակից շուտ բաժանվելու համար: Ես լսեցի նրա վկայությունը, որ մենք միասին

կլինենք: Ինչպես Ամմոնի ժողովուրդը Մորմոնի Գրքում «նրանք երբեք չէին նայում մահվան վրա սարսափի որևէ աստիճանով, իրենց հույսի և Քրիստոսի մասին պատկերացումների ու հարության պատճառով, հետևաբար, նրանց համար մահը կուլ էր գնացել Քրիստոսի հաղթանակով»: Հիսուսն ասել է. «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կեանքը. Ոչ ոք չի գալիս Հօր մոտ, եթե ոչ ինձանով»: Այդ դեպքում դուք ինչպե՞ս ճշմարտություն կփնտրեք առանց Քրիստոսի: Ոչ մի դեպքում:

Երբ ես այցելեցի տաճար, ինձ համար հաստատվեցին մարգարեի խոսքերը, որ «տաճարները մեր հավատքի ապրող և աշխատող վկայություններն են՝ հարության իրողության հանդեպ հավատով: Նրանք տրամադրում են սրբազան միջավայր, որտեղ կենդանի փոխարինողները կարող են կատարել մահկանացու կյանքի բոլոր անհրաժեշտ արարողությունները նրանց անունով, ովքեր ապրում են հոգիների աշխարհում»:

Մեր սիրելի մարդկանց հետ հարությունն ու կյանքը փոխում է երկրային կյանքի հեռանկարը: Որքան շատ մարդիկ հավատան դրան, այնքան լավը կդառնա մեր հասարակությունը: Հարությունը ավելին է, քան հոգու վերամիավորումը մարմնի հետ: Մորմոնի Գրքից մենք սովորում ենք, որ *վերականգնումը* կրկին ետ է բերում «մարմինը մարմնի համար» և «բարին բարու համար»:

Երեց Նիլ Ա. Մաքսվելի խոսքերով. «Մահվան հանդեպ Քրիստոսի տարած հաղթանակը վերջ դրեց մարդկային ողբերգությանը: Հիմա կան միայն անձնական ողբերգություններ, և սրանցից ևս մենք կարող ենք փրկվել՝ հետևելով Նրա ուսմունքներին, ով փրկեց մեզ համընդհանուր ոչնչացումից»: ■

Երախտագիտություն Քավության պարգևի համար

Ելենա Ուլյանովա
Բալթիկ միսիա

Երբ անդրադառնում եմ Հիսուս Քրիստոսի Քավության կարևորությանը ամեն մարդու կյանքում, ես հանգում եմ այն եզրակացությանը, որ դեռևս չեմ կարող լիովին ըմբռնել այս իրադարձության ծավալն ու մեծությունը: Ես հավերժ երախտապարտ եմ այս պարգևի համար, որը մեզ թույլ է տալիս վերադառնալ Երկնային ծնողների ներկայություն՝ Երկրի վրա փորձվելուց հետո: Քավությունը ավետարանի կիզակետն է, իսկ փրկության ծրագիրը պատրաստված է մեզ համար մեր Հավերժական Հոր կողմից ու հանդիսանում է մեր հանդեպ ունեցած աստվածային սիրո արտահայտությունը: Մեր Փրկիչ ու Քավիչ Հիսուս Քրիստոսը հուսալի կամուրջ է, որը մեզ թույլ է տալիս հատել այն անդունդը, որը գոյություն ունի մեր և Երկնային Հոր միջև մեր անհնազանդության պատճառով: Մեղքերը ծանրաբեռնում ու ճնշում են մեզ, պատճառում են ամեն տեսակի կասկածներ ու տառապանքներ, խոչընդոտում են մեր հոգևոր զարգացմանը, և նույնիսկ ետ շրջում այն, բայց անկեղծ ապաշխարության օգնությամբ մենք կարող ենք ազատվել մեղքի ազդեցությունից: Միայն ապաշխարության միջոցով ենք մենք ձեռք բերում Հիսուս Քրիստոսի քավող ողորմածությունը: Ապաշխարությունը . . . ուղղորդում է մեզ դեպի ազատություն, վստահություն և խաղաղություն» (Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Քավության աստվածային պարգևը»):

Սուրբ գրությունները պատմում են Քավության պատմությունը. «Եվ

Ելենա Ուլյանովա

ահա, նա կտանի փորձություններ և մարմնի ցավ, քաղց, ծարավ և հոգնածություն, նույնիսկ ավելի, քան մարդ կարող է տանել և չմահանալ. Քանզի ահա, արյուն կգա յուրաքանչյուր ծակոտիից, այնքան մեծ կլինի նրա տվայտանքն իր ժողովրդի ամբարշտության և պղծությունների համար» (Մոսիա 3.7): Երբ ես մտածում եմ, թե Հիսուս Քրիստոսն ինչի միջով անցավ, մինչ առաջարկում էր Իր Քավիչ զոհաբերությունը բոլոր նրանց, ովքեր ապրել են, ապրում են ու կապրեն Երկրի վրա, ես լցվում եմ «բնական մարդուն մերժելու», թուլություններից ազատվելու ցանկությամբ, որոնք ես այնքան հեշտությամբ ձեռք եմ բերում իմ աշխարհիկ կյանքում: Ես ցանկանում եմ դառնալ ավելի լավը, ավելի մաքուր, ավելի հնազանդ ու բարի: Դժվարին իրավիճակներում ես ապավինում եմ Երկնքի օգնությանը և գիտեմ, որ կարող եմ հույսս դնել այդ օգնության վրա, եթե հավատարիմ մնամ իմ ուխտերին:

Երբ մենք կատարում ենք աշխատանքի մեր բաժինը և անում այն ամենը, ինչ կարող ենք, մենք անշուշտ ապավինում ենք Նրա փրկող ողորմածությանը: Տերը միշտ պատրաստ է սփոփել ու ամրապնդել, մեղմացնել վախը և աջակցել: Նա տալիս է հույս և առաջարկում է հորդորանք: Մի օր մեզանից յուրաքանչյուրը կհայտնվի Քավիչի ու Դատավորի առջև և շատ եմ ցանկանում, որ հենց այդ պահին կարողանամ համարձակ նայել Նրա դեմքին և ասել, որ իմ գործերն արդար էին, ապա արտահայտել իմ երախտագիտությունը ինձ համար հեղված Նրա արյան համար: ■

Նկատեք ձեր օրհնությունները

Էհա Վահտրաս
Տալլին ճյուղ, Էստոնիա

Մեր մարմնում միաժամանակ ապրում են բնական մարդը և հավերժական աստվածային մարդը: Հավերժական մարդը Հոր բաժինն է և գիտե ամեն բան: Բայց բնական մարդը հաճախ հասկանում է բաների իմաստը, երբ կորցնում է դրանք:

Ես կկամենայի ձեզ հետ կիսվել երեք փորձառություններով այն ժամանակի մասին, երբ շատ հստակ զգացի դա:

Ամեն կիրակի ես գնում եմ Եկեղեցի և ճաշակում հաղորդությունից: Այն նորոգում է իմ ուխտերը Տիրոջ հետ, թարմացնում և զորացնում է ինձ, որպեսզի ես կարողանամ ավելի ճիշտ վարվել այն բոլոր իրավիճակներում, որոնցում հայտնվում եմ նոր շաբաթվա ընթացքում: Մենք շատ արագ ենք վարժվում լավ բաներին, դրանք օգնում և զորացնում են մեզ, սակայն ինչպես հաճախ է պատահում, մենք ընտելանում ենք դրան և սկսում մտածել, որ այդպես էլ պետք է լինի:

Երբ հնարավոր չէ այցելել Եկեղեցի որևէ կիրակի, ես նկատում եմ տարբերությունը: Ես զգում եմ, որ բաց եմ թողել ինչ-որ կարևոր բան: Աղոթքն ու սուրբ գրությունններն օգնում են գոյատևել շաբաթվա ընթացքում: Բայց հաջորդ շաբաթ հաղորդության ընդունումը ավելի կենդանի ու մեծ է դարձնում երախտագիտության զգացումը: Այդ ժամանակ ես կրկին հստակ հասկանում եմ, թե այն իսկապես ինչ մեծ օրհնություն է մեզ համար:

Տերը պատվիրել է մեզ հաճախ հավաքվել միասին Իր անունով: Երբ շաբաթվա ընթացքում ես հադիպում եմ մեր անդամներին առնվազն մեկ անգամ, կիրակի օրը զգում եմ, որ դեռ եռանդ ունեմ: Ես ավելի շատ կարող եմ կենտրոնանալ ուրիշ բաների վրա, քան պարզապես համալրել իմ սեփական եռանդը: Ես ավելի ուշադիր եմ և նկատում եմ ծառայելու հնարավորությունները: Ես տարբերում եմ, թե ով ունի ժպիտի կարիք, ում պետք է զրկեմ, ում հետ փոխանակվեմ քնքուշ խոսքերով: Ես զգում եմ, որ պետք է ուրախանամ և ուրախություն պարգևեմ:

Իմ աշխատանքը հնարավորություն է տալիս տաճար այցելել յոթ շաբաթը մեկ անգամ: Այս ամառ տաճարի հյուրատունը վերանորոգվում էր, և ես բաց թողեցի այցելելու մեկ հնարավորություն: Որքա՜ն երկար թվաց ինձ սպասումի ժամանակը: Չկար մի օր, որ չմտածեի տաճարի մասին: Ոչ մեկը կամ ոչ մի բան չէր կարող լռեցնել իմ կարոտը: Կրկին ու կրկին աչքի էի անցկացնում տաճարի քարտերը, հատկապես նրանք, որոնք կնքման կարիք ունեին: Ես նաև զգում էի, որ այդ մարդիկ, ի վերջո, սպասում էին իրենց սիրելիների հետ հանդիպմանը:

Տարբեր վայրերից մարդիկ հանդիպում են տաճարում և հետո մի շաբաթ ապրում են որպես ընտանիք: Հրաշալի հնարավորություն է հանդուրժողական, հոգատար և սիրող դառնալու համար: Տաճարում մենք զգում ենք խաղաղություն, կարողանում ենք ներել ինքներս մեզ և ուրիշներին, քանի որ այնքան հստակ ենք զգում Աստծո և Նրա Որդու կատարյալ սերը:

Տաճարից վերադառնալուց հետո փոփոխությունները նկատելի են: Ես զգում եմ աճը հաղորդության ժողովի ժամանակ և այլ անսովոր իրավիճակներում: Ես պարզ հիշում եմ, թե ինչպիսին էի տաճար գնալուց առաջ, և սա կարող է համեմատություն լինել ինձ համար: Ե ս ավելի հանգիստ եմ, զուսպ և ուրախ: Ես նկատում եմ ծառայելու ավելի շատ հնարավորություններ, ավելի մեծ սեր եմ զգում իմ եղբայրների ու քույրերի հանդեպ: Հիմա ինձ համար ավելի հեշտ է հիշել, որ մենք մեր բնույթով քննադատող ենք, և դատում ենք ուրիշներին նրանց վարքագծի համար: Ինձ համար հեշտ է հիշել, որ Աստված սիրում է Իր բոլոր զավակներին և տեսնում է բոլորի սրտերը:

Մեզանից ոչ մեկը զերծ չէ մեղքից: Բոլորն ապաշխարության կարիք ունեն: «Ձեզանից ով որ անմեղ է, թող առաջ նա քար գցէ դորա վերայ»,- (Հովհաննես 8.7) ասում է Հիսուսը դպիրներին ու փարիսեցիներին, ովքեր ցանկանում էին քարկոծել շնության մեջ

բռնված կնոջը: Եթե մենք ներում ենք օրինազանցին, ապա խաղաղություն ենք ստանում: Դատաստանը Աստծո իրավունքն է:

Ես վկայում եմ, որ Աստված ապրում է և առաջնորդում է Իր Եկեղեցին, և Հիսուս Քրիստոսի քավիչ զոհաբերության շնորհիվ մենք բոլորս հնարավորություն ունենք վերադառնալ Նրա մոտ, եթե մենք հավատարիմ ենք և անսասան՝ մեր բաժինը կատարելիս: ■

Ջեյն Սիմիր

Սա Քրիստոսն է

Ջեյն Սիմիր
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու
Ռիգա 1-ին ճյուղի Սփոփող Միության նախագահ

«Սա Քրիստոսն է» օրհներգը իմ սիրելի օրհներգերից մեկն է: Այս երգն ունի հրաշալի մեղեդի և խոսքեր, որոնք ստիպում են ինձ խորհել Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Խոսքերը գրվել են Առաքյալ Ջեյմս Ի. Ֆաուստի կողմից, և այս երգը, կարծես, նրա վկայությունն է Հիսուս Քրիստոսի մասին:

Պատկերացնում եմ, թե հաղորդության ժողովի ժամանակ Երեց Ֆաուստն ինչպես է ասում այս խոսքերը համայնքի առջև կանգնած.

«Ես կարդացի Նրա խոսքերը, որոնցով Նա աղոթում էր,
Մինչ տառապում էր Գեթսեմանում:
Ես զգում եմ Նրա սերը, զինը, որ Նա վճարեց:
Արյան քանի՞ կաթիլ թափվեց ինձ համար:
Հին Սրբերի հետ ուրախ կանչով
Ես ևս կարող եմ վկայել՝
Սա Քրիստոսն է:
Սա Քրիստոսն է, Աստծո սուրբ Որդին,
Մեր Փրկիչը, Տերը, մարդկության Քավիչը:
Սա Քրիստոսն է, մեր հոգիների ամոքիչը,
Ով փրկագնեց մեզ աստվածային սիրով»:

Երբ լսում եմ այս երգը, իմ սիրտը լցվում է երախտագիտությամբ, և իմ աչքերը լցվում են արցունքներով, քանի որ ես զգում եմ իմ Փրկիչի մեծ սերը իմ և բոլորիս հանդեպ: Մեր սիրելի Եղբայրը Իր կյանքը տվեց ինձ համար, իմ բոլոր սիրելի մարդկանց համար, որպեսզի մենք հնարավորություն ունենանք հավերժ ապրել միասին: Այս տառապանքը ստիպեց Նրան «ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել՝ թե՛ մարմնով, թե՛ հոգով» (ՎևՈ 19.18): Նա տառապեց՝ «տանելով ցավեր և չարչարանքներ, և փորձություններ ամեն տեսակի», Նա Իր վրա վերցրեց նույնիսկ մեր թուլությունները (Ալմա 7.11–12): «Արյան քանի՞ կաթիլ թափվեց ինձ համար»:

Հիսուսի այս անձնվեր գործողությունը ինձ հույս է տալիս և զորացնում առօրյա կյանքում, երբ ես ստիպված եմ պայքարել գայթակղությունների ու մարտահրավերների դեմ: Այն ինձ ուսուցանում է ավելի համբերատար լինել իմ և ուրիշների հանդեպ, քանի որ ես գիտեմ՝ մեր թույլ կողմերը կարող են դառնալ ուժեղ, ինչպես խոստացված է Եթերի 12.17-ում:

Ես այնքան երախտապարտ եմ, որ ամեն օր կարող եմ ապրել այստեղ՝ Երկրի վրա, երախտապարտ եմ սովորելու հնարավորության համար, թե ինչպես կարող եմ երջանիկ լինել նույնիսկ իմ դժվարությունների ու դաժան փորձությունների ժամանակ, երախտապարտ եմ աճելու և և հոգևորապես զարգանալու հնարավորության համար, որ կարող եմ փոքր քայլեր կատարել դեպի իմ վերջնական նպատակը՝ հավերժական կյանք իմ հավերժական ընտանիքի հետ: ■

Զատիկի ավանդույթները Սուիզների ընտանիքում

Դեյվիդ Ս. Սուիզ
Լիտվայի տարածաշրջանի նախկին նախագահ

Տոները միշտ էլ հրաշալի ժամանակ են ընտանիքների համար միասին հավաքվելու և ուրախ ժամանակ անցկացնելու, ծանոթությունները վերականգնելու ու մի քանի լավ հոգևոր դասեր սովորելու համար: Մեր ընտանիքի համար Զատիկը ավանդաբար եղել է այդ տոներից մեկը:

Սուիզ տատիկի ստեղծագործական հմտությունները միշտ էլ ուրախություն և զարմանք են պատճառել նրա զավակներին ու թոռներին: Նա սկսում է ծրագրել նախորդ տարվա Զատիկի ընտանեկան միջոցառումից անմիջապես հետո: Ամբողջ տարին նա հավաքում է թխվածքներ և ընտանեկան ճաշատեսակներ պատրաստելիս օգտագործվող ձվերի կճեպները: Նա զգուշությամբ կտրում է յուրաքանչյուր ձվի ծայրը և թափահարելով հանում է ձվի պարունակությունը, այդպիսով համարյա անվնաս պահելով ձվի կճեպը:

Երբ մոտենում է Զատիկը, ձվի կճեպները լցվում են փայլուն թղթերով և պատվում են գունավոր փաթեթավորման թղթերով: Թոռները սիրում են օգնել այդ ընթացքում, միաժամանակ գունավորելով խաշած ձվերը: Հիմա նրանք պատրաստ են փաթեթավորել պլաստիկ ձվերը, որոնք պարունակում են անակնկալներ և ներկած իսկական խաշած ձվեր:

Ընտանեկան հավաքույթը սովորաբար տեղի է ունենում Զատիկին նախորդող շաբաթ օրը: Զատիկի տոնակատարության համար մենք միասին հավաքվում ենք մեր տանը: Նախքան ճաշկերույթը, ժամանակ ենք տրամադրում հոգևոր մտքին, ինչպես նաև մեր երախտագիտությունն ենք արտահայտում մեր օրհնությունների և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի համար:

Տատիկի պատրաստած համեղ կերակուրները սպասում են ճաշասենյակում: Մեր ճաշացանկում ընդգրկված են՝ խոզապուխտ, կարտոֆիլով սալաթ, լոլիկի մածուկով խաշած լոբի, թարմ փոքրիկ բուլկիներ և տարբեր տեսակի աղցաններ: Աղանդերի համար մատուցվում են թխվածքաբլիթներ և պաղպաղակով բրաունի, որից հետո սկսվում է իսկական ուրախությունը: Սկզբում տան ետնաբակում թոռնիկները խաղում են մի խաղ, որի ժամանակ նրանք փնտրում են ձվերը: Ամենափոքրերին տրվում է 30 վայրկյան, որից հետո միանում են մյուսները՝ գտնելով թաքնված ձվերը և ծառերին կախված անակնկալները: Իսկ տան առջևի բակը թատերաբեմ է դառնում «ավագ երեխաների» համար, որտեղ նրանք փնտրում են ձվերը, որին երբեմն մասնակցում է նաև տատիկը: Փայլուն թղթերով լցված ձվերը, մեծ քանակությամբ պլաստիկ ձվերը և իսկական ձվերը թաքցված են այնտեղ: Տրվում է ազդանշանը և խառնաշփոթը սկսվում է: Նպատակն է հավաքել որքան հնարավոր է շատ ձվեր, այդ ամբողջ ընթացքում փորձելով զարմացնել բոլորին փոքրիկ գավաթի վրա դրված փշրված փայլուն թղթերով ձվով: Նույնիսկ փոքր երեխաներն են փորձում մտնել այս խաղի մեջ: Մեծ մրցանակը պլաստիկե ձուն է, որը պարունակում է 20 դոլար:

Այնուհետև միջոցառումը կրկին տեղափոխվում է ետնաբակ, որտեղ պապիկը թամբել է իր բեռնակիր այծերից երկուսը, որ փոքր երեխաները վարեն: Քաշի առավելագույն սահմանը 27 կգ է, ուստի երբեմն հիասթափության առիթ է նրանց համար, ովքեր մեծացել են անցյալ տարվա ընթացքում: Վարողների արձագանքը տատանվում է փորձառու վարողների ոգևորությունից մինչև «հանեք ինձ սրա վրայից» արտահայտությունը երկչոտ փոքրիկների կողմից:

Զատիկի հավկիթները

Զատկի օրվա խաղը

Դեյվիդ Ս. Սուիզը թոռան հետ

Ի՜նչ օրհնություն է ընտանիքը: Հիսուս Քրիստոսի ավետարանը մեզ հավերժական կյանքում միավորման հույս է տալիս մեր ընտանիքի անդամների հետ: Համոզված եմ, որ ապագայի մի որոշակի ժամանակակետում վարագույրի այն կողմից քնքշությամբ ու սիրով ետ կնայենք այս փորձառություններին: Հետաքրքիր է, արդյո՞ք երկնքում կլինեն ձու և փայլուն թղթեր: ■

ՈՒԿՐԱԻՆԱ ՄԻՍԻԱՅԻ ԴԱՐՁԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ես ինչպես խաղաղություն գտա Քրիստոսում

Իրինա Վլասենկո
Չերկասի ճյուղ, Ուկրաինա Կիև միսիա

Աստծո մասին ես լսել եմ իմ ընտանիքի անդամներից՝ իմ հորից ու մորից: Երբ ես այցելում էի տատիկիս, լսում էի, թե նա ինչպես էր կարդում Աստվածաշունչը: Մայրս հանդիմանում էր տատիկիս Աստծուն հավատալու համար: Այդ ժամանակ հավատացյալները վախենում էին բացահայտ մասնակցել եկեղեցու ժողովներին: Տանը մայրս զգուշությամբ էր խոսում Աստծո գոյության մասին:

Երբ ես մեծացա, հեռացա ծնողական տնից և տեղափոխվեցի ուրիշ քաղաք: Երբեմն գնում էի ուղղափառ եկեղեցի, քանի որ Աստծո հետ հաղորդակցվելու կարիք ունեի: Ես նայում էի սրբապատկերներին, մոմ էի վառում և մտածում, որ դա է Երկնային Հոր հետ շփվելու ուղին:

Քսաներորդ դարի 90-ականների վերջերին մեր կյանքը լի էր տագնապով ու անորոշությամբ: Այդ տարիներն ուղեկցվում էր հասարակական կառուցվածքի քայքայումով, որը մենք զգում էին մեզ վրա: Երկրում տիրում էր տնտեսական ճգնաժամը: Մենք կորցնում էինք սովորական հասարակական կապերը, աշխատանքը, սահմանադրական երաշխավորությունը և ներքին խաղաղությունը:

Իրինա Վլասենկո

1997 թվականին, ձմեռային մի երեկո Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միսիոներներն այցելեցին մեզ: Նրանք իրենց վկայությունը բերեցին այն մասին, որ Հիսուս Քրիստոսն ապրում է ու սիրում է մեզ: Ես ջերմություն ու խաղաղություն զգացի իմ սրտում:

Միսիոներների միջոցով ես ստացա իմ սեփական վկայությունը, որ Հիսուսը Քրիստոսն է, և արձագանքեցի Տիրոջ հրավերին. «Ինձ մոտ եկէք, ամեն վաստակածներ եւ բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ կտամ ձեզ» (Մատթեոս 11.28):

Ընտանեկան խնդիրները, ֆինանսական անապահով վիճակը, իմ հիվանդությունը, ինչպես նաև իմ զավակների առողջական խնդիրները, մեծ լարվածություն էին առաջացրել իմ կյանքում: Եվ ես ապավինեցի Տիրոջը իմ կյանքում հավասարակշռություն գտնելու որոնումներում:

Հիսուսն առաջնորդեց ինձ փոթորկալից իրադարձությունների միջով, որոնք մոլեգնում էին արտաքին աշխարհում: Երբեմն փորձությունները շատ ծանր էին թվում ինձ: Սակայն ես մենակ չէի, քանի որ Տերը իմ կողքին էր:

Երբ ես աջակցություն էի փնտրում սուրբ գրություններում, գտա մի պատմություն Տիրոջ և Նրա աշակերտների մասին, ովքեր հայտնվել էին ծովային փոթորկի մեջ: «Եւ քամիի մեծ փոթորիկ էր լինում, եւ ալիքները թափում էր նաւի մէջ, մինչեւ որ համարեա արդէն լցվում էր: Եւ ինքը նաւի ետի կողմումը բարձի վերայ քնած էր. Եւ նորան զարթնեցնում են եւ ասում նորան. Վարդապետ, հոգդ չէ՞ որ կորչում ենք: Եւ նա զարթնելով քամիին սաստեց, եւ ասեց ծովին. Լռիր, պապանձուիր: Եւ քամին դադարեց, եւ մեծ խաղաղութիւն եղաւ» (Մարկոս 4.37–39):

Ես գիտեմ, որ Քրիստոսը զորություն ունի հանդարտեցնելու ցանկացած փոթորիկ թե՛ ծովում, թե՛ մեր կյանքում: Հիսուսն ամեն ինչ արեց, որ հանգստացնի Իր սիրելի աշակերտներին:

Տերն ինձ ուսուցանել է ձգտել հանգստության՝ ներքին հանգստության: Ապագայի մասին ունեցած մտորումների ու տագնապների, ինչպես նաև անցյալի հուշերի մեջ տեղ չկա հանգստի ու խաղաղության համար: Անհանգստությունների և հուզական ցնցումների հորձանուտում այնքան շատ պատճառներ կան չներելու, վիրավորվելու և ուրիշներին դատելու համար: Երբ մեր հոգին հանգստանա, մենք կտեսնենք, որ այդ ամենն անցողիկ է:

Իր խաչելությունից կարճ ժամանակ առաջ Հիսուսն Իր խաղաղությունը թողեց մեզ որպես պարգև. «Խաղաղութիւն եմ թողում ձեզ, իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ. Ոչ թէ ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ, ձեր սիրտը չխռովի եւ չվախենայ» (Հովհաննես 14.27):

Քրիստոսի խաղաղությունը ստանալու համար մենք պետք է ներքին հանգստություն ունենանք: Այդ ժամանակ մենք բաց կլինենք Աստծո կամքը, Աստծո խոսքը և Աստծո սերն ընդունելու համար: Հանգստության մեջ մեր վստահությունն աճում է Տիրոջ հանդեպ: Հանգստության մեջ մենք կարող ենք անկեղծ լինել, չնայած դա կարող է հանգեցնել հիասթափության: Հանգստության մեջ մենք կարող ենք ապաշխարել: Հանգստության և ապաշխարության մեջ մեր սրտերը լցված են Սուրբ Հոգով և Աստծո անսահման սիրով: Իսկ հետո գալիս է խաղաղությունը: Խաղաղությունը, որը Հիսուսն է թողել մեզ:

Ես գիտեմ, որ Հոգու խաղաղությունը գալիս է Տեր Հիսուս Քրիստոսից: Ես գիտեմ, որ Քրիստոսը կարող է հանդարտեցնել բոլոր փոթորիկները, որոնք բարձրանում են մեր կյանքում: Ես գիտեմ, որ փոթորկից հետո հրաշալի խաղաղություն է տիրում: Ես գիտեմ, որ սրտի խաղաղությունն ու ներդաշնակությունը գալիս են Աստծո հանդեպ հավատքի միջոցով: ■

Ինչպե՞ս է սկսվում հավատքը

Վիկտոր Շապորդա
Չերկասի ճյուղ, Ուկրաինա
Կիև/Մոլդովա միսիա

Կյանքի որոշակի պահի մարդկանց մեծ մասին հետաքրքրում է, թե որն է կյանքի իմաստը, որտեղից են իրենք ծագում, և ինչը կամ ով է մարդուն մղում ապրելու...

Բազմաթիվ հարցերը, որոնք ծագում են մարդու մտքում, կարող են ունենալ մի պարզ պատասխան՝ «հավատք»: Եվ ոչ միայն ինքը՝ բառն է պատասխան, այլև դրա խորը իմաստը, էությունը և զորությունը, որն ընդգրկված է այդպիսի էության մեջ:

Նշանակություն չունի, թե մարդն ինչ է անում իր ջանքերի արդյունքը ստանալու հույսով, այն մղված է իր հավատքով և ինչ-որ անտեսանելի, բայց ցանկալի բանի ակնկալիքով:

Բայց հավատքը, որի մասին ուզում եմ խոսել, հավատքն է Հայր Աստծո, Նրա Որդի Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու հանդեպ, որը բացահայտում է ավետարանի վերականգնված լրիվությունը, ինչպես ցանկացած այլ աստվածային ճշմարտություն: Սա այն հավատքն է, որը կարող է լիովին բավարարել այն, ինչն ակնկալվում է որևէ երկրային բանականության կողմից, քանզի անհնարին ոչինչ չկա այն մարդու համար, ով Փրկիչ Հիսուս Քրիստոսին դարձնում է իր հավատքի կատարողը:

Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, աշխարհ եկավ ժամանակների լրության մեջ, և Իր օրինակով

Վիկտոր Շապորդա

փրկության ճանապարհ ցույց տվեց բոլոր նրանց, ովքեր հավատում էին Իրեն: Անցնելով անհավատության և ծաղրի միջով, կրելով աներևակայելի ֆիզիկական և հոգևոր տառապանքներ, որոնք առաջացել էին մարդկանց մեղքերի պատճառով, Նա խաչվեց և հարություն առավ երրորդ օրը՝ Իր կատարյալ սիրո ամբողջ վեհությամբ:

Նա ընդունեց աշխարհի մեղքերը, փրկագնելով մեզանից յուրաքանչյուրին, և շնորհիվ Իր սիրո, դարձավ մեր հավատքի պաշտպանն ու ծառան օրենքի առաջ: Որպեսզի ես և դուք կարողանանք ստանալ համաձայն մեր երազանքների, առանց հարկադրվելու գործել մեր կամքով՝ համաձայն մեր հավատքի: Բայց ինչպե՞ս է սկսվում այսպիսի հավատքը:

Նոր Կտակարանում Պողոսի նամակներից մեկում գրված է. «Ուրեմն հաւատքը լսելուցն է, եւ լսելը՝ Աստուծոյ խօսքիցը» (Հռովմայեցիս 10.17): Պարզվում է, որ երբ մենք լսում ենք «Աստծո խոսքը», ինչ-որ բան պետք է պատահի մեզ հետ: Բայց ինչպե՞ս:

Մորմոնի գրքում մարգարեն «Աստծո խոսքը» համեմատում է սերմի հետ. «Այժմ, մենք կհամեմատենք խոսքը սերմի հետ: Այսպիսով, եթե դուք տեղ տաք, որ մի սերմ սերմանվի ձեր սրտում, ահա, եթե այն լինի մի ճշմարիտ սերմ կամ մի լավ սերմ, եթե դուք դուրս չգցեք այն ձեր անհավատությամբ, չդիմադրելով Տիրոջ Հոգուն, ահա, այն կսկսի ուռչել ձեր կրծքում» (Ալմա 32.28): Եթե կա սերմ, պետք է լինի նաև հող, որտեղ այդ սերմը կարելի է ցանել: Այդ հողն ու այդ վայրը կարող են լինել մեր մշակված սիրտն ու միտքը:

Ի՞նչ կպատահի հետո, եթե մենք այդպիսի փորձ կատարենք: Համաձայն մարգարեի խոսքերի, եթե այն բարի սերմ է, իսկ հողը պատրաստ

է և պարարտ, «[սերմը կամ Աստծո խոսքը] ուռչում է և ծլում, և սկսում է աճել» (Ալմա 32.33):

Բայց նույնիսկ բարի սերմը պահանջում է բարենպաստ պայմաններ, բացի մշակված հողից, որում այն կաճի: Եվ սա ցույց է տալիս մեզ, որ մենք պետք է հեռու մնանք այն ամենից, ինչը կարող է վնասել մեր հավատքի աճին, և գտնենք այն ամենը, ինչը դրական կազդի դրա աճի վրա:

Այդպիսի բարենպաստ վայրերից մեկը տունն է: Տան մթնոլորտը ամենից նպաստավորն է ճշմարտության ընկալման համար: Ավետարանի բառերը լավագույնս ընկալվում են ընտանեկան ուսումնասիրության ժամանակ: Գիտելիքի և հավատքի հաստատման համար չկա ավելի լավ վայր, քան տունը: Դա այն վայրն է, որտեղ դրվում են հավատքի հիմքերը, որն էլ հրաշքներ է գործում:

Դա հրաշք չէ, երբ հավատում եք և համոզվում ամբողջությամբ, ինչը դուք երբեք չեք պատկերացրել ձեր կյանքում, մինչև դուք մի փոքր փորձ կատարեցիք, թույլ տալով, որ (հավատքը) փոքր սերմը (խոսքը) աճի գիտելիքի ծառի մեջ՝ հավերժական կյանքի պտուղների հետ միասին:

Եվ այս խոստումը գալիս է Տիրոջից. «Բայց նա, ով հավատում է այս բաներին, որոնք ես խոսել եմ, նրան ես կայցելեմ իմ Հոգու դրսևորումներով, և նա կիմանա և կվկայի: Քանզի իմ Հոգու շնորհիվ նա կիմանա, որ այս բաները ճշմարիտ են. քանզի այն կհամոզի մարդկանց բարիք անել» (Եթեր 4.11):

Մի օր, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներից մեկը տվեց ինձ հետևյալ հարցը (ես այդ ժամանակ դեռ անդամ չէի). «Կցանկանայի՞ք ավելին սովորել Աստծո մասին»: Եվ չնայած ես նախկինում մի քանի անգամ լսել էի այդպիսի հարցեր, այդ օրվանից սկսած «Աստված» բառը պտտվում էր իմ մտքում և, արդյունքում, պատրաստեց իմ սիրտը հավատքի սերմը ցանելու համար: Եվ դա պատահեց «Աստծո խոսքը լսելու» արդյունքում:

Մի ժամանակ ես հավատացի և ընդունեցի Հիսուս Քրիստոսին որպես իմ Արարիչ և Փրկիչ, որպես իմ լավագույն հավատքի Իրականացնող: Իսկ հիմա ես գիտեմ, որ Նրա Քավությունը բերում է խաղաղություն, բժշկում է և ուրախություն բերում երկրային կյանքում, ինչպես նաև ուրախություն, որը ծլարձակում է հավերժության մեջ, եթե ես չհրաժարվեմ պահել Նրա պատվիրանները:

Ես գիտեմ, որ, չնայած իմ ուժերը սահմանափակ են, Աստծո զորությունը իրոք անսահմանափակ է: Ես գիտեմ, որ Աստված մեր Հայրն է, և Տեր Հիսուս Քրիստոսը մեր սիրող Փրկիչն է, որ Նրանք վերականգնեցին ավետարանի լրիվությունը վերջին օրերում Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Սուրբ Հոգին կարող է հաստատել դա բոլոր զղջացող սրտերին և ապաշխարող հոգիներին: ■

Ուրախությունը Հիսուս Քրիստոսում է

Օլգա Պրոկոպովիչ
Վիննիցա ճյուղ, Կիև միսիա

Մորմոնի գրքում ես կարդացել եմ ուրախության մասին (2 Նեփի 2.25): Երբ մարդը երիտասարդ է և առողջ, ուրախության զգացումը բնական և տրամաբանական է նրա համար: Բայց տարիների ընթացքում, երբ մարդը կորցնում է իր առողջությունը, ուրախության խոսքերը տարօրինակ են հնչում նրա համար:

Եկեղեցում 19 տարի իմ անդամության արդյունքում ես համոզվել եմ, որ մարդը կարող է ուրախ ու երջանիկ լինել՝ անկախ հանգամանքներից: Ես սովորել եմ ուրախանալ փոքր և մեծ բաներով. լսել թռչունների երգը, զգալ ծաղիկների բույրը, գրկել իմ թոռներին: Բայց ես մեծ ուրախություն եմ զգում, գիտակցելով, որ այն գնվել է մեծ գնով: Այս ուրախությունը պարգև է Հիսուս Քրիստոսից: Նրա ծնունդը, կյանքը և օրինակը, Գողգոթայի խաչը և հրաշագործ հարությունը իմ սիրտը լցնում են երախտագիտությամբ ու երջանկությամբ: Իմ կյանքի փորձությունները ես ընկալում եմ ոչ թե որպես պատիժ, այլ փորձառություններ, որոնք ամրացնում են իմ հավատքը և կառուցում ուրիշների հավատքը:

Այսօր իմ սիրտը հրճվում է, քանի որ իմ մայրը, դուստրը և նրա ողջ ընտանիքը ապրում են ավետարանով, որ իմ ավագ թոռը սկսել է ծառայել տաճարում, իսկ նրա կրտսեր քույրն ու եղբայրը սիրում են կարդալ սուրբ գրություններն ու երգել Երեխաների Միության երգերը:

Չնայած ես համարյա կորցրել եմ տեսողությունս, սակայն գիտեմ, որ իմ Փրկիչն ապրում է: Նա ինձ տալիս է ուժ, ուրախություն և հավերժական կյանքի հույս: ■

Օլգա Պրոկոպովիչը իր կրտսեր թոռան՝ Նազարի հետ

ARMENIAN